ԿԱՐԾԻՔ

ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետությունում ստվերային տնտեսության նվազեցման գործում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է: Ցանկացած տնտեսության «քաոսային, չկանխատեսվող և տարերային» զարգացման առաջնային մեխանիզմը ստվերային տնտեսությունն է, ինչն առաջացնում է սոցիալ-տնտեսական ծանր հետևանքներ, ինչպիսիք են՝ եկամուտների կրճատումն ու անհավասարաչափ բաշխումը, ոչ ֆորմալ զբաղվածությունը, խորացող աղքատությունն ու բնակչության արտագաղթը: Ուստի, ստվերային տնտեսության դեմ պայքարը լավագույնս կազմակերպելու համար անհրաժեշտ է վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները, իրականացնել հետևողական քաղաքականություն, գործադրել կառավարման արդյունավետ գործիքակազմ:

Ատենախոսությունում վերլուծվել են ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները, հատկապես շեշտադրվել են այն դրդապատճառները, որոնք առաջանում են տնտեսվարող սուբյեկտների մոտ ստվերային գործարքների նկատմամբ հակվածությունը մեծացնելու առումով և որի հիման վրա մատնանշվել են տնտեսության հիմնական բացթողումները, որոնք առաջացնում են ստվերային տնտեսության մասշտաբների ընդլայնում, և որպես բացասական հետևանք՝ բնակչության կենսամակարդակի նվազեցում:

Կառուցվածքային առումով հետազոտությունն իրականացվել է ատենախոսությունում բարձրացված հիմնահարցերի և դրանց հետ կապված խնդիրների լուծման տրամաբանական հաջորդականության ապահովման սկզբունքով: Նախաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին գլուխը** նվիրված է ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների առաջացման տեսամեթոդաբանական հիմքերի ուսումնասիրությանը:

Հետազոտության **երկրորդ գլխում** ներկայացվել են ստվերային տնտեսության ծավալների գնահատման մոտեցումները ՀՀ-ում և վերլուծվել են բնակչության կենսամակարդակի վրա ազդող գործոնները:

Ատենախոսության **երրորդ գլխում** դիտարկվել են ստվերային տնտեսության նվազեցման ուղիները Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության արդյունքների **հավաստիությունը** պայմանավորված է նրանով, որ դիտարկվող հիմնահարցի համար տեսական հիմք են հանդիսացել ստվերային տնտեսության վերաբերյալ տարբեր տնտեսագետների գրքերը, գիտական հոդվածները, ինչպես նաև՝ ստացված արդյունքների փորձարկումը և կիրառումը:

Աշխատանքի **գիտական նորույթը** ստվերային տնտեսության գնահատումն է MIMIC մոդելի և Կաուֆման-Կալիբարդիի մեթոդի հիման վրա, ինչպես նաև՝ սպառման առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների՝ հացի, շաքարավազի, կարագի և բուսական յուղի շուկաների վերլուծության արդյունքում ստվերային շրջանառության ծավալների բացահայտումն է:

Աշխատանքում մշակված մոտեցումները, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն տեսական և գործնական նշանակություն:

Ատենախոսությունը զերծ չէ **դիտողություններից**: Դրանցից կարելի է նշել հետևյալները՝

1. Ատենախոսության 12-րդ էջում հեղինակը նշել է, որ ստվերային տնտեսությունից առաջացած եկամուտները բաշխվում են բնակչության 10-15%-ի միջև (և նույնիսկ ավելի քիչ, օրինակ՝ ՀՀ-ում): Ինչ մեթոդաբանությամբ են հաշվարկվել և ինչպես են ստացվել այդ տոկոսային մեծությունները:
2. Սեղմագրի 3-րդ էջում հետազոտության «Նպատակը և խնդիրները» բաժնում նշվում է, որ «Հետազոտության հիմնական նպատակը ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության հետևանքները ... »: Տեսամեթոդական առումով առավել ճշգրիտ կլիներ բնակչության կենսամակարդակի ցուցանիշի փոխարեն օգտագործվեր առավել ընդհանրական ցուցանիշ, օրինակ՝ կյանքի որակի ցուցանիշը: Բացի այդ, բնակչության կենսամակարդակը նույնպես հանդիսանում է վերոնշյալ սոցիալ-տնտեսական ցուցանիշներից մեկը:
3. Աշխատանքը առավել շահեկան կլիներ, եթե կատարվեր ստվերային տնտեսության կամ նրա առանձին ոլորտների գնահատում՝ կանխիկ և ոչ կանխիկ փողերի գործարքների պայմաններում և իրականացվեր համապատասխան վերլուծություն:
4. Աշխատանքում շատ հաշվարկներ կատարվել են 2010-2017 թվականների համար, օրինակ՝ սեղմագրում բերված գծապատկեր 4,5,6 և այլն: Կարծում եմ, որ հաշվարկները կարելի էր ավելացնել առնվազն 2018 թվականի համար:

5. Աշխատանքը ավելի շահեկան կդառնար, եթե դինամիկայում գնահատվեր ՀՀ տնտեսության ստվերայնության մակարդակը և իրականացվեր համապատասխան գործոնային վերլուծություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունները, սակայն, չեն ազդում հետազոտության արդյունքների վրա, այլ դրանք հետապնդում են ստվերային տնտեսության կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին նվիրված հետագա աշխատանքների ուղղությունների բացահայտման նպատակ:

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսությունն ունի գիտագործնական նշանակություն, որի արդյունքների կիրառումը կարող է նպաստել հանրապետությունում ստվերային տնտեսության ծավալների ճիշտ գնահատմանն ու կրճատմանը:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին է վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են, իսկ ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը:

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսությունների համար ներկայացվող այլ պահանջներին, և հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ _____ **Ս.Ա. Դավոյան**

Պարոն Ս.Դավոյանի
Ստորագրությունը հաստատում եմ՝
Պատմ. գիտ. թեկն. Լ. Ս. Հովսեփյան
(կազմակերպության գիտ. քարտուղար) _____ *(ստորագրություն)*

19.06. 2020 թ.